



Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ [հեղեղյալ հղմամբ](#):

Մեր պահասենյակները հագեցած են ժամանակակից չափանիշներին համապատասխան անվտանգության համակարգով և ունեն բարձր աստիճանի պաշտպանություն:

Յուրաքանչյուր անհատական պահատուփ ունի 2 բանալի, որոնցից մեկը տրամադրվում է հաճախորդին, իսկ մյուսը պահվում է Բանկում: Պահատուփը հնարավոր է բացել միայն երկու բանալիների միաժամանակյա կիրառմամբ:

Մենք պատասխանատու ենք յուրաքանչյուր անհատական պահատուփի անվտանգության և անձեռնմխելիության համար, ինչպես նաև երաշխավորում ենք մեր հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը: Հաճախորդին տրվում է լիակատար ազատություն ընտրելու պահատուփի չափը և պահատվության ժամկետները՝ սկսած 1 օրից մինչև 1 տարի:

Պահատվության ծառայությունը մատուցվում է Էրեբունի, Շենգավիթ, Կենտրոն, Նալբանդյան, Արաբկիր, Տերյան, Գյուլբենկյան, Էջմիածին, Սիսիան, Գորիս, Կապան, Իջևան, Մարտունի, Դիլիջան, Արտաշատ մասնաճյուղերում և բանկի գլխամասային գրասենյակում:

Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է ներկայացնել միայն անձը հաստատող փաստաթուղթ:

Դրույքաչափ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ			
Պահատվության ժամկետը	Փոքր (80X180X450, 75X255X425, 50X310X435, 75X310X435)	Միջին (155X255X425, 125X310X435, 175X310X435, 300X100X460, 300X200X460)	Մեծ (180X420X450, 155X550X425, 200X620X435, 525X620X435, 600X200X460)
1-14 օր	7,000.00	8,000.00	9,000.00
15-30 օր	10,000.00	11,000.00	12,000.00
31-90 օր	17,000.00	20,000.00	22,000.00
91-180 օր	22,000.00	25,000.00	30,000.00
181-270 օր	25,000.00	30,000.00	35,000.00
271-365 օր	30,000.00	35,000.00	40,000.00



Այլ պայմաններ

- Ծառայությունը մատուցվում է հաշվետեր հաճախորդներին՝ անհատական պահատեղերով կահավորված մասնաճյուղերում (ՀՍՎ):
- Հաճախորդի կողմից անհատական պահատեղի բանալու կորստի հետևանքով բանալու կրկնօրինակի պատրաստման կամ անհատական պահատեղի վերանորոգման համար Բանկի կրած ծախսերը հատուցում է հաճախորդը, ընդ որում.
 - Հաճախորդին տրամադրված զույգ բանալիներից մեկը կորցնելու դեպքում գանձվում է 15,000 ՀՀ դրամ,
 - Հաճախորդին տրամադրված զույգ բանալիներից երկուսն էլ կորցնելու կամ պահատեղի կողպեքը վնասելու դեպքում գանձվում է 50,000 ՀՀ դրամ:
- Վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատեղը հաճախորդի կողմից չազատելու դեպքում վարձակալության պայմանագիրը շարունակում է գործել՝ Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ անակցեպտ երկարաձգվելով սկզբնական պայմանագրի ժամկետով: Ընդ որում, երկարաձգման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաճախորդի հաշվից(ներից) գանձվում է վճար՝ երկարաձգման օրվա դրությամբ հրապարակված սակագնին համապատասխան: Նշված եղանակով երկարաձգումները կատարվում են այնքան մինչև հաճախորդի հաշվի(ներին) առկա գումարը բավարարում է սակագինը գանձելու համար, հակառակ դեպքում ոչ ավել քան 1(մեկ) տարի:
- Բանկը սույն պայմանների 2-րդ և 3-րդ կետով նախատեսված ծախսերը անակցեպտ կերպով գանձում է Հաճախորդի հաշվում(ներում) առկա դրամական միջոցներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- Սույն պայմանների 3-րդ կետով նախատեսված 1(մեկ) տարին լրանալուց հետո հաճախորդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անհատական պահատեղը չազատելու դեպքում Բանկը իրեն իրավունք է վերապահում առանց հաճախորդի ներկայության և/կամ լրացուցիչ թույլտվության բացելու պահատեղը, պահատեղում արժեքների առկայության դեպքում դրանք գույքագրել և տեղափոխել ի պահ ընդհանուր դրամապահոց

* Ոչ ռեզիդենտ Հաճախորդներից գանձվում է սահմանված սակագների կրկնապատիկը

Կարևոր է իմանալ

- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ծանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):
- Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:



- Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Արդշինբանկ» ԲԲԸ հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am, ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է: